ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2016թ. թիվ 343-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.24 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

Լոռու մարզում 2016թ. ձմեռային զորակոչը կազմակերպելու և անցկացնելու նպատակով՝

1. Ստեղծել տարածաշրջանային զինվորական կոմիսարիատների տեղական զորակոչային հանձնաժողովներ և հաստատել կազմերը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել տեղական զորակոչային հանձնաժողովների բժիշկ-մասնագետների անհատական կազմերը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հաստատել զինվորական կոմիսարիատների զորակոչիկների ընտանեկան, գույքային և նյութական պայմանները ստուգող հանձնաժողովների կազմերը՝ համաձայն հավելված 3-ի:

4. Հանձնաժողովի աշխատանքներն սկսել 2016թ. հոկտեմբերի 24-ից և ավարտել 2017թ. հունվարի 31-ին:

5. Հանձնարարել՝

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի զինվորական կոմիսարներին՝

ա. ապահովել տեղական զորակոչային հանձնաժողովների արդյունավետ աշխատանքը և խստորեն հետևել օրինականության պահպանմանը.

բ. սահմանված ժամկետում ապահովել բոլոր զորակոչիկների ներկայությունը զինվորական կոմիսարիատ.

գ. պարտադիր զինվորական ծառայության զորակոչից խուսափող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վերաբերյալ նյութերն ուղարկել Հայաստանի Հանրապետության ոստիկանության Լոռու մարզային վարչություն, իսկ զորակոչի ավարտից հետո՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության համապատասխան բաժիններ.

դ. ապահովել զորակոչիկների կազմակերպված և հանդիսավոր ուղարկումը հանրապետական հավաքական:

2) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Լոռու մարզային վարչության պետին՝

ա. ապահովել զորակոչից խուսափող զորակոչիկների որոնումը և նրանց ներկայանալը զորակոչային տեղամասեր.

բ. զորակոչիկներին հանրապետական հավաքական ուղարկելու օրերին ապահովել մարզի զորակոչային տեղամասերում հասարակական կարգի պահպանումը:

3) Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝

ա. մարզի բժշկական հաստատությունների ղեկավարների ուշադրությունը հրավիրել զորակոչի հետ կապված հարցերի ժամանակին լուծմանը, հետազոտման ուղարկվող զորակոչիկների առողջական վիճակի ստուգման գործընթացի կազմակերպմանը.

բ. զորակոչիկների ստացիոնար փորձաքննություն իրականացնելու նպատակով՝ զինվորական կոմիսարիատներն ապահովել համապատասխան սարքավորումներով (սոնոգրաֆիա, արյան խումբ և արյան ՌՀ, ընդհանուր հետազոտություններ), բուժկանխարգելիչ հաստատություններին հանձնարարել՝ ապահովել անհրաժեշտ քանակով պատվաստանյութեր, ֆլյուորո (ռենտգեն) և էլեկտրասրտագրական (ԷՍԳ) ժապավեններ, երևակման նյութեր.

գ. հանձնարարել համապատասխան համաբուժարանների տնօրեններին՝ ըստ զորակոչի ենթակա զորակոչիկների ցուցակների, կատարել հետազոտություններ և այդ մասին զինկոմիսարիատներ ներկայացնել համապատասխան փաստաթղթեր մինչև ձմեռային զորակոչի բժշկական հանձնաժողովների աշխատանքների սկսելը:

դ. կազմակերպել զորակոչիկների բժշկական փորձաքննության, բժշկական օգնության և սպասարկման գործընթացը:

6. Մարզի համայնքների և կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևի) ղեկավարներին՝

Տարածաշրջանային զինվորական կոմիսարիատներին աջակցել զորակոչիկներին ծանուցագրերի հանձնման և նրանց զինկոմիսարիատներ ներկայանալու գործընթացում՝ իրենց անհատական ծանուցագրերում նշված ժամկետում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. հոկտեմբերի 20
ք.Վանաձոր